

Տեղեկություններ հոսպիտալացման մասին

Բժիշկներն որոշել են, որ Դուք պետք է մնաք այստեղ՝ հիվանդանոցում:

Այս կարգադրությունը կոչվում է հոսպիտալացում:

Որքա՞ն ժամանակ է տևում հոսպիտալացումը:

Այն կիրառելի է միայն այն դեպքում, եթե հոգեկան հիվանդության պատճառով Ձեզ կամ ուրիշների համար կա լուրջ վտանգ, և այլընտրանքային բուժում չկա:

Հոսպիտալացումը պետք է դադարեցվի նշված հանգամանքների վերացման դեպքում:

Ո՞վ է ստուգում բժիշկների կարգադրությունը:

Հաստատությունում տեղավորման/հոսպիտալացման հրահանգը վերանայվում է դատարանում: Հոսպիտալացումից մոտավորապես չորս օր հետո դատավորը այցելում է հիվանդանոց: Նա է որոշում, թե արդյոք Ձեզ կարելի է դուրս գրվել: Եթե որոշվի, որ Դուք դեռ պետք է մնաք, դատարանը նշանակում է նոր օր փորձաքննության համար: Սակայն բժիշկները կարող են ավելի շուտ դուրս գրել բուժհաստատությունից:

Ի՞նչ կարող է անել պացիենտների օմբուդսեմը Ձեզ համար:

Մենք իրազեկում ենք Ձեզ Ձեր իրավունքների մասին և պաշտպանում ենք Ձեր իրավունքները: Մենք ներկայացնում ենք Ձեր շահերը դատարանում: Մենք գործում ենք հիվանդանոցից անկախ և պարտավորվում ենք պահպանել գաղտնիություն: Մեր աշխատանքը Ձեզ համար անվճար է: Դուք կարող եք դիմել մեզ նաև ձեր դուրսգրումից հետո:

Ցանկանու՞մ եք ներգրավել վստահելի անձ:

Դուք կարող եք բժիշկներին հայտնել այնպիսի վստահելի անձի մասին, ով կաջակցի Ձեզ:

Համաձայն չե՞ք բուժման այս կամ այն մեթոդի հետ:

Խոսե՛ք բժիշկների հետ, եթե հրաժարվում եք բուժումից: Ըստ Ձեր պահանջի դատարանը կարող է նախապես դիտարկել, արդյոք բուժումը պետք է արվի: Ձեր կամքին հակառակ ձեռնարկված այլ միջոցներ նույնպես կարող են հետագայում քննվեն դատարանի կողմից:

Դիմե՛ք մեզ, եթե ունեք լրացուցիչ հարցեր.

